վերէն վար կարդալով կ'ունենանք Աբբայ Հայր կուչէ Սարգսի[1] »․ մենք ամբողջին հրատարակութեամբ կ'ունենանք այժմ որոշ իմաստ մը․ «ԱԲԲԱՅ ՀԱՅՐ ԿՈՉԵՑԵԱԼ ՍԱՐԳՍԻՍ ··· ՈՂՋՈՒՆ » (վերջին բառ երրորդ սիւն)։

ՃԼԵ.

Այս թուղթը կը ներկայացնէ Աւստրիոյ Մարիամ Թերեզայի շրջանէն մէկ քանի զինուորական գործողութիւններէ զատ հետաքրքրական դէպք մը։

Գերապատիւ և գերյարգոյ Տեառն իմոյ և Հօր Մխիթարայ Վարդապետի և Աբբահօր

. . . Վասն պատերազմի ոչինչ այլ, բայց միայն այս լսի, զի թագուհին մեր ժողովէ օր ըստ օրէ զբազմութիւն զօրաց և ոչ կամի հաշտիլ ընդ Բրուսին, թէև Ինկիլիզն խնդրեաւ իցէ զի հաշտեսցի ընդ նմա։ Դարձեալ վաճառականք մեր, բերին զլուր թէ բրուսն առեալ է ի ձեռաց սաքսին զքաղաքն Լիբձեա, և թէ սպառնացեալ է կործանել զքաղաքն եթէ ոչ տայցեն նմա զերեք միլիոն. և նոքա խոստացեալ են տալ։ Եւ այժմ հասեալ են մերձ այնմ քաղաքին քառասուն հազար սաքս, նաև յերկրէն իւլախաց երեքտասան հազար, ոչ գիտեմ վասն ոյր պատճառի։ Ի մերձակայ աւուրս ի կերլայ եղև սքանչելիք, զի խաչելութիւն մի մեծ տասն ամաց, որ էր արտաքոյ քաղաքին անկեալ, որոյ երեսն նայէր դէպ ի յարևելս, այժմ ոլորեալ է ի կիսոյ ի վեր և երեսօքն նայի դէպ ի քաղաքն, որ և առնէ զբազում բժշկութիւն այց առնողացն։...

Հայր Մարկոս Իսիգուցեան

Ցամի Տեառն 1746 Ցունվարի 5

[Պաշֆալով]

ՃԼԶ.

Վրթանէս եպիսկոպոս՝ իր առ Մխիթար տածած սիրոյն և զգացումներուն հետ՝ կը հաղորդէ միանգամայն բացայայտ կերպով Եկեղեցական Բարձրագոյն Իշխանութեան մօտ Սարգիս Սարաֆեան Արքեպս.ի վայելած համբաւը։

Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայ Հայր կոչեցեալ Գերյարգեցելոյ Սերտ սիրով, և վաղեմի կարօտիւ , զփրկչաւանդ ողջոյնն ընծայեմ։

Ի յանցեալ աւուրս ի գրոյ պատկերահան Յօհաննիսին ծանեայ զնիհարիլդ վերստին ի ձեռն դեղնացաւ կրից, որոյ վասն՝ թէ ևս ես իցեմ ախտակից, սակայն թողլով զնմն ի բաց, յաւէտ ցաւեցայ, և ցաւիմ զքէն։ Ուստի չունելով զայլ ինչ հնար, եթէ ոչ միայն զաղօթելն վասն քո, զի բժշկեսցէ Տէր զքեզ ի ախտակրութենէն յայդմանէ աղօթիւք Սրբոց։ Նաև զմերոյս կացութենէ կարես իմանալ, եթէ խորհիցիս զճետին հասակն ծերութեան իմոյ, զոր գրեթէ ըստ ասելոյ ումեմն՝ զերկոսեանն զրկեմ[2], այսինքն զարեգակն և զգերեզմանն։ Աղօթեսցես վասն մեր, զի զելս բարիս պարգևեսցէ մեզ Տէր Ցիսուս շնորհիւն իւրով։ Եւ ահա Գերապայծառ Սարգիս Արքեպիսկոպոսն կեսարիոյ, դիմեաց աստ այդր, ընդունեցեալ և պատուեցեալ ի Սրբազան Քահանայապետէն և ի Սրբոյ ժողովոյն։ Թէպէտ մեք չատ ջանացաք զսորա աստ մնալն, նաև մեծաւորք ոմանք։ Սա-

---

1. — Գալեմք. « Կենս. Սարգ. Արքեպս. Սարաֆ.ի », էջ 207.
2. — Այսպէս ի բնագրին.